ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին

№ 16

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

Посвящается 50-летию основания факультета востоковедения ЕГУ

№ 16

Ереван
Издательство ЕГУ
2019

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES

Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty of Oriental Studies of YSU

№ 16

YEREVAN
YSU PRESS
2019

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Դավիթ Հովհաննիսյան
8-9-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 9-22

Վահե Հակոբյան
ԻՍԹԻՀՍԱՆԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ 23-34

Ռուբեն Միրաքյան,Հարություն Մաթևոսյան
ՈՒՍԱՄԱ ԲԵՆ ԼԱԴԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՋԻՀԱԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ 35-47

Անդրանիկ Հարությունյան
«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋ 48-60

Թյուրքագիտություն

Ավետիք Հարությունյան
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 61-75

Հայկ Դարբինյան
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 76-87

Մարիամ Մելքոնյան
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆԵՋԱԹԻ ԵՎ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆ 88-96

Արթուր Միրզոյան
ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 97-108

Տաթևիկ Սարգսյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (SOCAR) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 109-119

Սամվել Ռամազյան
«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 120-152

Իրանագիտություն

Արտյոմ Տոնոյան
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ (ԹԱԹԵՐԵՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. 153-160

Լիանա Պետրոսյան
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2009 ԹԹ.) 161-171

Շուշաննա Գալստյան
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՀՐԵՅՆ 172-180

Աննա Գևորգյան
«ՄԱՐՋԱՅԵ ԹԱՂԼԻԴԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ 181-191

Հասմիկ Բիանջյան
ԽԱՂԱՆԻԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ 192-198

Հովհաննես Խորիկյան
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XX ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 199-209

Անի Նահապետյան
ԱՌԱՋԻՆ ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 210-223

***

Ամալյա Գրիգորյան
ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿ. ԱՌԱՍՊԵ՞Լ, ԹԵ՞ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 224-229

Տիգրան Գրիգորյան
«ՃԱՆԿՈՂ ԱՐԾԻՎԸ» ԵՎ «ԵՐԿՆԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ 230-247

CONTENT

Arabic Studies

Davit Hovhannisyan
ARAB WORKS OF THE 8-9TH CENTURIES AS A SOURCE FOR THE STUDY OF ADAPTATION PROCESSES 9-22

Vahe Hakobyan
ISTIHSAN IN SUNNI MAZHABS AND ITS ADAPTATION 23-34

Ruben Mirakyan, Harutyun Matevosyan
THE DECLARATION OF JIHAD AGAINST AMERICANS BY OSAMA BIN LADEN 35-47

Andranik Harutyunyan
THE TRANSFORMATION OF THE FOREIGN POLICY OF THE STATE OF QATAR IN THE THREE SEA SYSTEM 48-60

Turkic Studies

Avetik Harutyunyan
THE ROLE OF MILITARY IN FOREIGN POLICY DECISION MAKING IN TURKEY IN 1990's 61-75

Hayk Darbinyan
THE PERCEPTION OF DIPLOMACY BY OTTOMANS AND ITS PRACTICE IN THE CONTEXT OF EXTERNAL WORLD 76-87

Mariam Melkonyan
REFLECTION OF GENDER CONTRADICTIONS IN DIVAN LITERATURE: NEJATI AND MIHRI HATUN 88-96

Arthur Mirzoyan
COMPARATIVE ANALYSIS OF CONTEMPORARY ARMENIAN AND AZERBAIJANI POETRY 97-108

Tatevik Sargsyan
THE ACTIVITIES OF STATE OIL COMPANY OF AZERBAIJAN (SOCAR) IN GEORGIA 109-119

Samvel Ramazyan
THE QUESTIONS OF STUDYING OF THE HISTORISM OF

THE EPIC OF “KOROGLU” AND THE ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE XVIII CENTURY 120-152

Iranian Studies

Artyom Tonoyan
ON SOME METHODOLOGICAL FEATURES IN UNIVERSITY TEACHING OF CAUCASIAN PERSIAN (TAT) LANGUAGE 153-160

Liana Petrosyan
THE SOCIO-POLITICAL SITUATION IN IRAN UNDER THE FIRST PRESIDENTAL TERM OF MAHMOUD AHMADINEJAD (2005-2009) 161-171

Shushanna Galstyan
THE EXPERIENCE OF EXPORTING THE IDEOLOGY OF THE IRANIAN ISLAMIC REVOLUTION TO BAHRAIN 172-180

Anna Gevorgyan
THE INSTITUTE OF “MARJAYE TAQLID” AS A CORE FACTOR OF THA SHIA NETWORK 181-191

Hasmik Bianjyan
ABOUT KHAQANI SHIRVANI’S POETRY 192-198

Hovhannes Khorikyan
ON THE LOCATION OF THE XX SATRAPY OF ACHAEMENID PERSIA 199-209

Ani Nahapetyan
THE FIRST ACHAEMENIDS AND MAGIS 210-223

***

Amalya Grigoryan
KING SOLOMON AS A REAL AUTHOR OF THE SONG OF SONGS: MYTH OR TRUTH? 224-229

Tigran Grigoryan
THE SYMBOLS OF "CLAWING EAGLES" AND "HEAVENLY KINGDOMS" IN THE ART OF CHRISTIAN EAST 230-247

Արթուր Միրզոյան[1]

ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *ժամանակակից պոեզիա, պոստմոդեռնիզմ, անկախության շրջան, անտիպոեզիա, «նոր ալիք»*

Խորհրդային Միության փլուզումը բեկումնային նշանակություն ունեցավ այդ պետության քաղաքացի ժողովուրդների ոչ միայն քաղաքական կյանքում, այլև գրականության մեջ։ Երկաթե վարագույրի վերացումը, ազատ շուկայական հարաբերությունների հաստատումը, Ռուսաստանի՝ որպես մշակութային գերտերության դերի որոշակի անկումն ու պետական գրաքննության դադարեցումը խորապես ազդեցին ԽՍՀՄ տարածքում ապրող բոլոր ժողովուրդների մշակութային կյանքի վրա։ Հայերի և ադրբեջանցիների դեպքում այս նոր փուլը պիտի նշանավորվեր նաև Արցախյան պատերազմով, փակ սահմաններով ու շարունակական պայքարով։ Այս հանգամանքներով պայմանավորված՝ երկու ժողովուրդները գրեթե անծանոթ ու անհաղորդ են մնում միմյանց կողմից ստեղծվող գրականությանը, մինչդեռ պետք է ենթադրել, որ հե՛նց այս հանգամանքները պայմանավորել ու պայմանավորում են երկու երկրների գրական իրականությունները։ Այս հոդվածով փորձելու ենք ընդհանուր հայացք նետել հայ և ադրբեջանական ժամանակակից պոեզիայի որոշ օրինաչափություններին ու միտումներին, թեմատիկ ու ոճական առանձնահատկություններին։ Հոդվածը չի հավակնում համապարփակ ու լիարժեք կերպով ներկայացնել ո՛չ հայ, ո՛չ ադրբեջանական ժամանակակից պոեզիան.

[1] ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանող, էլ. փոստ՝ mirzoianarthur@gmail.com

դա անհնար կլիներ անգամ գրքի սահմաններում: Այնուամենայնիվ, կարծում ենք, առերեսումն ադրբեջանական բանաստեղծության ներկային կարող է խիստ օգտակար լինել և ընդլայնել մեր պատկերացումները ադրբեջանական մշակույթի ու հասարակության մասին:

Անկախության շրջանի հայ գրականության մասին խոսելիս հայաստանյան գրականագիտության մեջ առավելապես շեշտադրվել է արձակը[2], իսկ ադրբեջանական ժամանակակից գրականության մասին Հայաստանում հետաքրքրվում են, սովորաբար, երբ տվյալ գործը լինում է Արցախյան պատերազմի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմաներով, և կրկին՝ գերազանցապես արձակ: Բավական է հիշել միայն Աքրամ Այլիսլիի «Քարե երազները» կամ Ալեքպեր Ալիևի «Արտուշ և Զաուրը»: Սա հատկապես հետաքրքիր է՝ հաշվի առնելով, որ թե՛ հայ, թե՛ ադրբեջանական գրականության մեջ բանաստեղծությունը ավանդաբար համարվել է եթե ոչ գերիշխող, ապա խիստ կարևոր ձև:

ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված գրականության առաջին շրջանը 1990-ականների՝ անկախության գրականությունն էր: Տնտեսակարգի փոփոխությունը ենթադրում էր գրական դաշտի կարգավորման ձևերի փոփոխություն, պաշտոնական գաղափարախոսության ու գրաքննության վերացումը նշանակում էր նոր, հաճախ՝ անցյալում տաբուավորված թեմաների մուտքը գրականություն, իսկ Երկաթե վարագույրի վերացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի միջոցների աննախընթաց զարգացումը բերում էին մի կողմից՝ ավելի մեծ գլոբալ ինտեգրում և արևմտյան տարբեր գրական, գեղագիտական, փիլիսոփայական հոսանքների ազդեցության ուժեղացում, մյուս կողմից՝ գրականության է՛լ ավելի բազմաշերտ ու անմիագիծ ընթացք: Այս ամենի հետ մեկտեղ՝ 1990-ականների գրական

[2] Տե՛ս Ս. Գրիգորյան, Բանասիրություն և բանավեճ, Երևան, 2015, էջ 219-220:

ընթացքի վրա մեծ ազդեցություն ունեցավ անցյալի փորձի իմաստավորումը։ Հայ գրականության դեպքում 1990-ականների գրականության շատ գծեր գալիս են 1960-ականների զարթոնքի շրջանից։ 1960-1970-ականների սերունդը նորարար եղավ արվեստի մի շարք ոլորտներում՝ կինո (Սերգեյ Փարաջանով, Արտավազդ Փելեշյան), երաժշտություն (Ավետ Տերտերյան, Տիգրան Մանսուրյան, Աշոտ Զոհրաբյան, Մարտին Իսրայելյան), կերպարվեստ (Մինաս, Հենրիկ Էլիբեկյան, Արտո Չաքմաքճյան), արձակ (Հրանտ Մաթևոսյան, Աղասի Այվազյան, Պերճ Զեյթունցյան, Վահագն Գրիգորյան), նաև պոեզիա (Հովհաննես Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Սլավիկ Չիլոյան, Արտեմ Հարությունյան)[3]։ Այս շրջանի բանաստեղծներն աչքի են ընկնում պաշտոնական, գերիշխող մշակույթի խնդրականացմամբ, արևմտյան ավանգարդի ավանդույթների կիրարկմամբ, թեմաների թարմությամբ։ Այս սերունդն է, որ, Սևակից հետո, ընդլայնում է գեղարվեստական լեզվի սահմանները՝ ասպարեզ բերելով «հասարակ», «անբանաստեղծական» բառապաշար։ Ինչպես նշում է Ալեքսանդր Թոփչյանը. «Կատարվում է բառի պոետական սահմանների լայնացում՝ ուղղություն վերցնելով դեպի կյանքի սահմաններ։ Բառերն այլևս արտոնված չեն «պոեզիային» պատկանելու հատուկ լուսապսակով»[4]։ Կարելի է ասել, որ 60-ականների սերունդը, ինչպես և այս շրջանի ռուսական դիսիդենտական գրականությունը, ուշ մոդեռնիզմի արտահայտություններից էր, երբ հետպատերազմյան շրջանի որոշակի «պահպանողական» մոտեցումների հաղթահարմամբ արդիական փորձը ևս մեկ ծաղկման շրջան ապրեց, ինչպես նաև դրվեցին հետարդիության հիմքերը։ 1990-ականների և 2000-ականների հայ պոեզիայի այնպիսի նշանակալից

[3] Տե՛ս Խեչիկյան Հ., Անկախության շրջանի հայ արձակը, Երևան, 2016, էջ 187։
[4] Թոփչյան Ալ., Բառի սահմանները, Երևան, 1978, էջ 85։

երևույթ, ինչպիսին էր անտիպոեզիան, պիտի հիմնվեր հենց այս ավանդույթի վրա[5]:

Ի տարբերություն Հայաստանի և մի քանի այլ խորհրդային հանրապետությունների՝ Ադրբեջանում դիսիդենտական գրականություն այդպես էլ ի հայտ չեկավ[6]: Երբեմն այսպիսին են համարում մեյխանան՝ յուրահատուկ իմպրովիզացիոն երաժշտական-պոետիկ ժանր, որ տարածում գտավ Բաքվում և առհասարակ Ապշերոնի շրջանում: Պետք է, սակայն, նկատել, որ, չնայած խորհրդային պաշտոնական գեղագիտությանը հակադրվելուն, մեյխանան գրական լիարժեք ուղղություն չդարձավ և մնաց ժողովրդական ստեղծագործության մակարդակում, թեև հետագայում ազդեց ադրբեջանական հիփ-հոփ երաժշտության վրա[7]: Արդիական փորձի բացակայությունը բերեց նրան, որ, ըստ էության, մինչև անկախացումը, ադրբեջանական գրականության մեջ գերիշխող մնացին սոցռեալիստական գեղագիտությունը, իրանական դիվանի պոեզիայի, աշուղական արվեստի ավանդույթները: Այնուամենայնիվ, անկախությունից հետո, թեև Հայաստանից բավական ուշացմամբ, Ադրբեջանում ևս սկսեց նկատվել բանաստեղծների նոր սերնդի բերած թարմ շունչը:

Ռուսական արվեստի և գրականության պատմության մեջ պոստմոդեռնիզմի շրջանի սկիզբ սովորաբար համարում են 1980-ականների վերջն ու 1990-ականների սկիզբը[8]: Բուն 1980-ականների գրականությունը, սակայն, իր որոշ պոստմոդեռնիստական հատկանիշներով հանդերձ (միջտեքստայնություն, ժանրային սինթեզներ, դեկոնստրուկցիայի

[5] Տե՛ս Հակոբյան Հ., Ժամանակակից հայ պոեզիան (1990-2014), Երևան, 2014, էջ 16-17:
[6] Տե՛ս Мамедов Н., Шаг в настоящее, Арион, N2, 2006.
[7] Տե՛ս Azerbaijan International (9.1), 2001, էջ 48-51.
[8] Տե՛ս Epstein M., After the Future: The Paradoxes of Postmodernism and Contemporary Russian Culture, Amherst: The University of Massachusetts Press, 1995, էջ 188-210.

տարրեր), ինչպես ռուս, այնպես էլ հայ գրականության մեջ մնաց առավելապես մոդեռնիստական ավանդույթի սահմաններում[9]: Պետք է նկատել նաև, որ անգամ պոստմոդեռնիզմի հաստատումով մոդեռնիստական միտումները չվերացան: Հայկական մշակույթի որոշակի զգայունությունն ու խորհրդային տարածքի երկրների մեջ համեմաբար վաղ արձագանքը պոստմոդեռնիզմին բացատրելի է հենց 60-ականների սերնդի ակտիվ գործունեությամբ և դրա հետագա արժևորմամբ անկախացումից հետո:

Հայ պոեզիայի մեջ այս նոր դարաշրջանի ամենատիպական արտահայտությունն էր մի գրական երևույթ, որ պիտի կոչվեր անտիպոեզիա՝ հակաբանաստեղծություն: Անտիպոեզիայի առաջին դրսևորումներն ի հայտ եկան անկախության հենց առաջին տարիներին. դեռ 1990 թ.-ին տպագրվում է Արմեն Շեկոյանի «Թուղթ ու գիր» բանաստեղծական ժողովածուն, ուր արդեն տեսանելի են Շեկոյանի պոեզիայի հիմնական գծերը՝ բանաստեղծական ավանդական, կանոնիկ ձևերի կազմաքանդում, միջտեքստայնություն, հայ դասական պոեզիային հեգնական հղումներ: Հաջորդ տարի լույս տեսած Վիոլետ Գրիգորյանի «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում» անդրանիկ ժողովածուում էլ հետարդիական այս կազմաքանդումը կատարվում էր նաև ժողովրդական խաղիկների, էպոսային տարրերի առատ կիրառմամբ: Հետագայում այս կամ այն կերպ անտիպոեզիայի մաս են դառնում Վահրամ Մարտիրոսյանը, Մարինե Պետրոսյանը, Սիփան Շիրազը, Նարինե Ավետյանը, Գայանե Բաբայանը, Արփի Ոսկանյանը և այլք: Անտիպոեզիան իր անվանումն է ստանում Արմեն Շեկոյանի՝ 2000 թվականի նույնանուն ժողովածուից, սակայն, ինչպես ասացինք, այն սկսվել է անկախության առաջին իսկ տարիներին և այդ ընթացքում բավական զարգացում ապրել:

[9] Տե՛ս Խեչիկյան Հ., նշված աշխ., էջ 188:

Խոսելով անտիպոեզիայի դիրքավորման մասին, Մ. Պետրոսյանն ասում է. «Անտիպոեզիայի «անտի»-ն ուղղված է պոեզիայի ինքնավարության դեմ, որովհետև ինքնավարության երազանքը կեցության դիպվածում ալիբի ունենալու երազանքն է, կամ, եթե Վիոլետ Գրիգորյանի օգնությանը դիմենք, «իրականության ականապատված հարթակներ ոտք չդնելու երազանքը»»[10]:

Որոշակիորեն նման գործընթացներ ադրբեջանական պոեզիայի մեջ սկսվում են 2000-ական թվականներից: Այս ուշացումը, թերևս, կապված է նույն արդիական փորձի բացակայությամբ, որը պիտի բավարար հիմք նախապատրաստեր պոստմոդեռնիզմի համար: Ուստի եթե հայ պոեզիայում հետարդիության մուտքը կապվում է «անբանաստեղծական» բանաստեղծության 60-ականների փորձի, ինչպես նաև 20-րդ դարասկզբի մոդեռնիստական փորձառության վերարժևորման, զարգացման և հաղթահարման հետ, ապա ադրբեջանական պոեզիայում գործ ունենք արևմտյան ձևերի յուրացման, ինչպես նաև արևելյան պոեզիայի կազմաքանդման գործընթացների հետ: 2000-ականներին գրական ասպարեզ իջած այս նոր բանաստեղծների սերնդի ամենավառ ներկայացուցիչներն են Ռասիմ Հերիսչին, Մուրադ Կյոհնեգալան, Ռասիմ Գարաջան և Ազադ Յաշարը, որոնք 2001 թվականին հիմնել են Անկախ Գրողների Ընկերակցությունը (ԱԳԸ), որի նպատակն է Ադրբեջանի Գրողների միությունից անկախ գրական միջավայր ստեղծել: 2002 թվականից լույս է տեսնում ԱԳԸ տպագիր օրգանը՝ «Ալաթորան» գրական ամսագիրը, որում էլ տպագրվում են այս նոր գրողներից շատերը: Բանաստեղծ, թարգմանիչ Նիջաթ Մամեդովը գրական այս երևույթն անվանում է «նոր ալիք»: Ի տարբերություն անտիպոեզիայի՝ այս անվանումը ոչ թե բանաստեղծների կողմից սեփական փորձառության մտածման արդյունքում եկած

[10] Մարինե Պետրոսյան, Անտիպոեզիա կամ երբ բանաստեղծը չի փնտրում ալիբի, «Գրական թերթ», 2000, թիվ 10:

ինքնանվանում է, այլ պայմանական արտահայտություն, որով անվանվում է բանաստեղծների մի ամբողջ շարք, որոնք հաճախ իրարից խիստ տարբեր գրական տարածություններում են գտնվում: Ինչպես ինքը՝ Մամեդովն է նշում. «....«նոր ալիքն», այս դեպքում, բավական լայն ու պայմանական ձևակերպում է, որ ներառում է ինչպես մոդեռնիստների, ավանգարդիստների, այնպես էլ պոստմոդեռնիստների: Նրա ներկայացուցիչների գլխավոր տարբերակիչ գիծն այն է, որ նրանք ստեղծում են գրականություն բառի արևմտյան և ոչ արևելյան իմաստով, այսինքն սրանք այնպիսի հեղինակներ են, որոնց համար «էսթետիկան էթիկայի մայրն է» արտահայտությունը կասկածներ չի հարուցում»[11]: Այսպիսով, բանաստեղծների այս նոր սերունդն իր վրա է վերցնում ոչ այնքան գրական շարունակական ավանդույթի ներսում հեղափոխություն անելու, որքան գրականության քաղաքակրթական հիմքն իսկ փոխելու պատասխանատվությունը: Սա ակնհայտ է, օրինակ, Ազադ Յաշարի մոտ, որի՝ 2003 թվականին լույս տեսած «Բոլորն ու ոչ ոք» բանաստեղծական ժողովածուում արևմտյան ավանգարդի տարատեսակ տեխնիկաներն օգտագործվում են արևելյան լեզվամթերքի հետ. պատահական չէ, որ հեղինակն ինքը պոստմոդեռնիզմը համարում է «ելքի ճշմարիտ ուղին մեր գրականության համար, որ դեռ շփոթմունքի մեջ է «SOSռեալիզմից» հետո»[12]: Այս քաղաքակրթական անցումը, սակայն, չի ենթադրում պարզ հրաժարում անցյալի արևելյան ժառանգությունից, այլ դրա կազմաքանդում, հեգնական վերաիմաստավորում և պաստիշ: Սրա գիտակցումը կա հենց գրողների գործերում. Ռասիմ Գարաջան իր «Իրեր» շարքում առանձին բանաստեղծություններ է նվիրում հասարակ, առօրեական բաների նկարագրությանը,

[11] Տե՛ս Н. Мамедов, Шаг в настоящее, Арион, N2, 2006.

[12] Նույն տեղում:

ինչպես առաստաղին ու մարզաքարին։ Ըստ Նիջաթ Մամեդովի՝ սա «Ադամի գրականությունն է, որ բացահայտում ու անվանում է աշխարհը, որ ունի իրերին անուն տալու ձիրքը»[13]։ Համեմատության համար՝ ո՛չ Արմեն Շեկոյանը, ո՛չ Վիոլետ Գրիգորյանը նման խնդիր իրենց առջև չէին դնում անտիպոեզիայի շրջանում։ Այսպիսի խնդիր չէր դնում նաև մինիմալիզմին ավելի մոտ կանգնած Մարինե Պետրոսյանը (Գարաջան համարվում է ադրբեջանական պոեզիայում մինիմալիզմի հիմնադիր)։ Պետք է նկատել, սակայն, որ քաղաքակրթական հենքի փոփոխության նպատակ ունենալով հանդերձ՝ Գարաջան «Իրեր»-ում չի հրաժարվում արևելյան, հատկապես՝ իրանական պոեզիայի գեղագիտությունից.

Աստղեր
աստղերը դեմ առ դեմ կանգնել
երկինքը աչքերը չռել
ու մեզ են նայում
լռելյայն հույսով
դեռ հավատում են
որ մենք՝ մարդիկս
վերջապես կանենք
արտառոց մի բան

Նմանատիպ պատկեր ենք տեսնում նաև Խագանի Հասսի բանաստեղծություններում, թեև, պետք է նշել, վերջինս չի պատկանում այսպես կոչված «նոր ալիքին»։ Խագանի Հասսը դիմում է այս արևելյան գեղագիտական կլիշեներին և որոշակիորեն «շեղում է» դրանք՝ դիմելով առօրեականության պատկերների և անսովոր շարահյուսության .

[13] Նույն տեղում։

Այգի

նրա անշունչ մարմինը դուրս եկավ մեռելատնից նոր-նոր
ուսերի վրա
անգամ հիմա
չի լռում կնոջ շշունջը ծաղկաթմբի միջից
մենք չգիտենք դեռ՝ ինչ տարավ մահը նրա ծաղիկներից

Պետք է նկատել, որ իրանական պոեզիայի հանդեպ հետաքրքրությունը որոշ չափով բնորոշ է նաև արդի հայ պոեզիային, սակայն եթե Հայաստանի պարագայում սա հերթական ոչ խորքային ազդեցությունն է, ապա Ադրբեջանում այն գրեթե համատարած է և շատ ավելի էական նշանակություն ունի. իրանական ժամանակակից պոեզիան արևելյան գրական ավանդույթի և գեղագիտության փոխակերպման, վերաիմաստավորման օրինակ է ադբեջանական գրականության համար։

Նոր սերունդը երկու երկրներում էլ իր բանաստեղծությունը սկսեց կառուցել այս «անկախական» հիմքերի վրա։ Հայաստանում, անշուշտ, անտիպոեզիային զուգահեռ ստեղծագործող մի շարք գրողներ սկսեցին տեսանելի դառնալ աղմկոտ իննսունականներից հետո. խոսքը այնպիսի բանաստեղծների մասին է, ինչպիսիք են Հրաչյա Թամրազյանը, Ներսես Աթաբեկյանը, Ավագ Եփրեմյանը, Վահագն Աթաբեկյանը և այլք, որոնց պոեզիան, հենվելով դասական բանաստեղծական կառույցների և տաղաչափության վրա, ստեղծում էր իմաստների, մշակութային հենքի խաղարկմամբ, միջտեքստային մեծ խտությամբ տեքստեր[14]։ Կարելի է ասել, որ եթե անտիպոեզիայի հետևորդները հեղափոխականներ էին, ապա բանաստեղծների այս խումբը՝ բարենորոգիչներ։ 2000-ականներից սկսած այս բանաստեղծները սկսեցին ավելի շատ նկատվել, ասպարեզ իջան նոր պոետներ,

[14] Տե՛ս Հակոբյան Հ., Ժամանակակից հայ պոեզիան (1990-2014),Երևան, 2014, էջ 43-44։

որոնք շարունակում էին այս «բարենորոգչական» մոտեցումը՝ Հուսիկ Արան, Էդուարդ Հարենցը և այլք։ Մյուս կողմից՝ Արփի Ոսկանյանի, Անահիտ Հայրապետյանի, Կարեն Անտաշյանի, Գեմաֆին Գասպարյանի պոեզիան որպես հենման կետ վերցրեց անտիպոեզիայի ավանդները։ Անահիտ Հայրապետյանի և Արփի Ոսկանյանի գործերը շարունակում են բանաստեղծության մեջ կնոջ ու լեզվի ազատագրման երկակի առաքելությունը, Գեմաֆին Գասպարյանը պաստիշի, իրոնիայի, գրական թըրնթեյլիզմի, միջտեքստայնության կիրառումը հասցնում է առավելագույնի, նրա պոեզիան «առանձնանում է ավանգարդիստական որակներով, որոնք բնորոշ են նյույորքյան դպրոցին (New York School) կամ լեզվի պոեզիային (Language poetry)»[15], իսկ Կարեն Անտաշյանը դասական բանաստեղծության խաղարկումները որպես հիմք ընդունվելով՝ կառուցում է հեգնական հետարդիական պոեզիա։

Ադրբեջանական գրականության մեջ նկատելի են նմանատիպ միտումներ. արդեն 2000-ականների վերջերին գրական ասպարեզ են մուտք գործում նոր սերնդի բանաստեղծներ, այդ թվում՝ երիտասարդ բանաստեղծուհիներ, ինչպես Նարմին Քամալը, Գյունել Մովլուդը, Սևինջ Փերվանեն, որոնց պոեզիան բերում է ոչ միայն կնոջ ազատագրման, այլև առհասարակ քաղաքական-քաղաքացիական բողոքի թեմաներ

թող հայրերին
Մեծ պատերազմների կանչող
Երեխաներ չծնեն իմ երկրի կանայք
թող սերը, սիրածին
Բոլորից, ամեն ինչից հետոյին
Պահեն տղամարդիկ
Մենք առանց այդ էլ գիտենք՝
ինչ կարժ է կյանքը (Գյունել Մովլուդ)

[15] Ղարսլյան Կ., Ի՞նչ կա-չկա «Չկա՝ չկա»-ում, Ինքնագիր 8, 2018, էջ 343:

Առհասարակ ադրբեջանական ժամանակակից բանաստեղծության մեջ հատկապես նկատելի է քաղաքական բողոքի թեման. այսպես, Ռասիմ Գարաջան իր բանաստեղծություններից մեկում դիմում է այլմոլորակայիններին՝ խնդրելով օգնություն տրամադրել Ադրբեջանի տարբեր քաղաքների մանկատներին, քանի որ «երկրից հույս չկա»[16]: Ազշին Ենիսեյի «Վաղվանից բոլոր հանցագործները ես եմ» բանաստեղծությունը բողոք է ավտորիտար հասարակարգի դեմ. «Դիկտատորացու երեխային մայրը չի ծնում/մայրը փսխում է բռնապետ դառնալիք երեխային/արգանդից»[17]: Պատերազմի թեման ևս հաճախ միահյուսվում է պետության պաշտոնական դիրքորոշմանը հակադրվելու միտմանը: Այսպես, ««Չէ» պատերազմին» բանաստեղծության մեջ Գարաջան պատմում է պատերազմի ժամանակ ադրբեջանցի զինվորների կողմից Սիրանուշ անունով հայ աղջկա բռնաբարության մասին՝ անմեղ ու անփորձ երիտասարդների շփոթմունքը հակադրելով պատերազմի և բռնաբարության դաժանությանը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հայ և ադրբեջանական ժամանակակից բանաստեղծության մեջ նկատվում են որոշ ընդհանուր միտումներ՝ պայմանավորված ներկա իրադրությամբ: Ինչպես 1990-ականներին Հայաստանում, այնպես էլ 2000-ականներին Ադրբեջանում ասպարեզ է գալիս նոր սերունդ, որ իր առաջ նպատակ է դնում կազմաքանդել և հեղափոխել գրականությունը: Եթե Հայաստանում դրա նպատակը պոեզիային նոր շունչ հաղորդելն էր, ապա Ադրբեջանում դա ունեցավ քաղաքակրթական նշանակություն: Խորհրդային տարածքի երկրների մեջ պոստմոդեռնիզմը համեմատաբար շուտ մուտք գործեց հայ գրականություն, ինչը կապված էր մոդեռնիստական նշանակալի ավանդույթի գոյության հետ, որը չկար Ադրբեջանում,

[16] Նույն տեղում, էջ 61-74:
[17] Նույն տեղում, էջ 83-84:

ուստի ադրբեջանական պոեզիայի մեջ այն հաստատվեց միայն 21-րդ դարում: Թեմատիկ առումով ադրբեջանցի բանաստեղծների մոտ հաճախ են հանդիպում քաղաքական ճնշումների, պատերազմի, սոցիալական խնդիրների մասին գործեր:

COMPARATIVE ANALYSIS OF CONTEMPORARY ARMENIAN AND AZERBAIJANI POETRY

Arthur Mirzoyan

(Summary)

In this article it is attempted to present the general picture of Armenian and Azerbaijani contemporary poetry by a comparative method. Sharing a common Soviet heritage, Armenian and Azerbaijani literatures have some similarities, yet differ substantially due to different origins and histories. While there is a strong tradition of modernism in Armenian poetry, Azerbaijani poetry lacks it, which consequently brought to an earlier rise of postmodern tendencies and sensibilities in Armenian poetry in the late 80’s and 90’s, while in Azerbaijani poetry they only appeared in the 00’s with the so-called “new wave” of poets. Thematically, a significant part of the new generation of poets is concerned with critique of the authoritarian regime and social boundaries.

СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ И АЗЕРБАЙДЖАНСКОЙ ПОЭЗИИ

Артур Мирзоян

(Резюме)

В статье сделана попытка представить общую сравнительную картину армянской и азербайджанской *по*эзии. Разделяя общее советское наследие, армянская и азербайджанская литературы имеют некоторые общие черты, но существенно отличаются друг от друга из-за разных происхождений и исторических развитий. В то время как в армянской поэзии существуют сильные традиции модернизма, в азербайджанской поэзии их не было, что и привело к более ранним манифестациям постмодернистских тенденций и чувствительности в армянской поэзии к концу 80-х и в 90-х, в то время как в азербайджанской поэзии они появились лишь в нулевых годах с приходом поэтов так называемой «новой волны». С точки зрения тематики, значительное число авторов нового поколения заинтересовано критикой авторитарного режима и социальных ограничений.